ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1/6

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

«23» հունվարի 2015 թ. Քաղաք Երևան

2015 թվականի հունվարի 23-ին, ժամը 11:00-ին տեղի ունեցավ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստը: Հոգաբարձուների խորհրդի 28 անդամներից նիստին մասնակցում էին 26-ը /ներկայության թերթիկը կցվում է/:

Նիստը նախագահող՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Ս.Սարգսյանը ներկայացրեց նիստի օրակարգը և առաջարկեց տալ կարծիք: Օրակարգի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան: Քվեարկությամբ միաձայն հաստատվեց նիստի հետևյալ օրակարգը.

1. ա/ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2014 թվականի գործունեության հաշվետվությանը և 2015 թվականի բյուջեի նախահաշվի նախագծի քննարկումն ու հաստատումը:

   /Զեկուցող՝ ՀԱԱՀ ռեկտոր Ա.Թարվերդյան/

   բ/ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2015 թվականի կառուցվածքի և հաստիքների քննարկումն և հաստատումը:

   /Զեկուցող՝ ՀԱԱՀ ռեկտոր Ա.Թարվերդյան/

2. Ընթացիկ հարցեր:

Օրակարգում ընդգրկված բոլոր հարցերի, այդ թվում ընթացիկ հարցերի վերաբերյալ, նյութերը նախապես տրամադրվել էր Հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամներին:

ԼՍԵՑԻՆ՝ *Օրակարգի 1-ին հարց.*

ա/ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2014 թվականի գործունեության հաշվետվության և 2015 թվականի բյուջեի նախահաշվի նախագծի քննարկման և հաստատման հարցի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ ՀԱԱՀ ռեկտոր Ա.Թարվերդյանը /2014 թ. հաշվետվությունը և 2015թ. բյուջեի նախահաշիվը կցվում են/:

ՀԱՐՑԵՐ՝

Ա.Խաչատրյան. - Ֆինանսական հաշվետվության որոշ հոդվածներում առկա է նախատեսվածից ավելի ծախս, ինչ՞ով է դա պայմանավորված:

Ա.Թարվերդյան. - Աշխատավարձի հոդվածում մոտ 140 մլն դրամ գերածախսը պայմանավորված է հաշվետու տարվա ընթացքում բոլոր աշխատողներին տրված 1.5 հավելավճարներով և սեպտեմբերի 1-ից աշխատավարձի 10 տոկոս բարձրացմամբ:

Էլեկտրոէներգիայի գծով ծախսային հոդվածում գերածախսը կազմել է մոտ 11 մլն դրամ: Չնայած այն բանի, որ տարվա ընթացքում էլեկտրոէներգիայի գինը բարձրացել է 10 տոկոսով և մեծացել է համալսարանում համակարգչային պարկը, այնուամենայնիվ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ համալսարանում էլեկտրոէներգիայի սպառման - նկատմամբ պատշաճ հսկողություն չի իրականացվում: Տնտեսական մասը այս հարցում անելիքներ ունի:

Գործուղումների մասով ծախսային հոդվածում գերածախսը, որը կազմում է մոտ 7 մլն, պայմանավորված է բացառապես միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերով:

Գույք /գրասենյակային և լսարանային/, համակարգչային տեխնիկա և շենքերի նորոգում ծախսային հոդվածներում գերածախսերը, որոնք միասին կազմել են մոտ 36 մլն դրամ, պայմանավորված են համալսարանի նյութա-տեխնիկական բազայի բարելավմանն ուղղված Պետբյուջեից լրացուցիչ ֆինանսավորմամբ:

ՀԱԱՀ «Բալահովիտ» ուսումնափորձնական տնտեսության համար նախատեսված ծախսային հոդվածում գերածախսը, որը կազմել է մոտ 10 մլն, պայմանավորված է ուսումնափորձնական տնտեսությունում կաթնատու կովերի կազմափոխմամբ: Հաշվետու տարում ձեռք են բերվել մոտ 10 մլն դրամի կովեր: Այս հարցի վերաբերյալ Հոգաբարձուների խորհուրդն ունի համապատասխան որոշում:

Ավտոմեքենաներ, սարքավորումներ ծախսային հոդվածում նախատեսված էր 15 մլն դրամի ծախս, սակայն այն չի կատարվել, որովհետև գյուղտեխնիկա ձեռքբերելու համար համալսարանների զարգացման ծրագրով մեր համալսարանին հատկացվել էր 67,9 մլն դրամ:

Ա.Խաչատրյան - Բավարարված եմ:

2. Ա.Ղարիբյան . - 2015թ. համալսարանի բյուջեի նախագծում ծախսումները գերազանցում են մուտքերին: Դեֆիցիտը զգալի է, դա չի՞ անդրադառնա համալսարանի գործունեության վրա:

Ա.Թարվերդյան. – Քանի որ հունվարի 1-ի դրությամբ ունենք դրամական միջոցների մնացորդ 1,19 մլրդ դրամ, դա հնարավորություն կտա ծածկել դիֆիցիտը: Այդպես վարվել ենք նախորդ տարիներին, իսկ ծախսերի կրճատումը կբերի համալսարանի զարգացման տեմպերի դանդաղեցման:

Ա.Ղարիբյան. - Բավարարված եմ:

Ա.Թարվերդյանը նշեց, որ 2015 թվականի ամռանը նախատեսվում է ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի տեղափոխումը Շուշի, նոր հարմարավետ ուսումնական մասնաշենքեր: Համալսարանը չի կարող անմասն մնալ այդ կարևոր միջոցառումից, ուստի հախահաշվի նախագծում նախատեսված է որոշակի գումար նոր մասնաշենքերի համար գույք ձեռք բերելու նպատակով:

Առաջարկը խորհրդի բոլոր անդամների կողմից արժանացավ հավանության և նշվեց, որ դա կարևոր խթան կհանդիսանա համալսարանի շրջանավարտների համար, այդ կարևոր հարցում անձնական ներդրում ունենալու աջակցության հիմնադրամի միջոցով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Հոգաբարձուների խորհրդի անդամներ Ռ.Սուքիասյանը, Ս.Ղազարյանը, Հ.Հակոբյանը և Ս.Սարգսյանը: Նրանք բարձր գնահատեցին համալսարանում 2014թ. կատարված աշխատանքները, ինչպես ուսումնական գործընթացի կազմակերպման, այնպես էլ գիտական և ֆինանսատնտեսական ոլորտներում: Նրանք առաջարկեցին հավանություն տալ և հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի» 2014թ. գործունեության հաշվետվությունը և գործադիր մարմնի գործունեությունը գնահատել բավարար, ինչպես նաև հաստատել 2015թ. ծախսերի նախահաշվի նախագիծը:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ս.Սարգսյանը նշեց, որ ՀԱԱՀ ռեկտորի զեկույցը ամբողջությամբ հենց վկայությունն էր համալսարանի ողջ կոլեկտիվի կողմից անցած տարվա ընթացքում կատարված ուսումնագիտական նպատակային ու կազմակերպված աշխատանքի: Նա առաջարկեց քվեարկության դնել ելույթներում հնչած առաջարկը:

ՈՐՈՇԵՑԻՆ Հոգաբարձուների Խորհուրդը քվեարկությամբ միաձայն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2014 թվականի գործունեության հաշվետվությունը և գործադիր մարմնի կատարած աշխատանքը գնահատել բավարար:
2. Հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2015թ. բյուջեի նախահաշիվը:

ԼՍԵՑԻՆ՝ Օրակարգի 1-ին հարց.

բ/ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2014 թվականի կառուցվածքի և հաստիքների քննարկման և հաստատման մասին հարցը:

/Զեկուցող՝ ՀԱԱՀ ռեկտոր Ա.Թարվերդյան/:

Զեկուցողը նշեց, որ համալսարանի կառուցվածքում և հաստիքացուցակում նախորդ տարվա համեմատությամբ էական փոփոխություններ չեն առաջարկվում: Կառուցվածքի և հաստիքացուցակի նախագծերը բաժանված են խորհրդի անդամներին:

Առաջարկվեց հաստատել համալսարանի 2015թ. կառուցվածքը և հաստիքացուցակը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հոգաբարձուների Խորհուրդը քվեարկությամբ միաձայն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2015 թվականի կառուցվածքը և հաստիքները /փաստաթղթերը կցվում են/:

ԼՍԵՑԻՆ՝

2. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Ընթացիկ հարց 1-ին .

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտոր Ա.Թարվերդյանի հաղորդումը 2014 թվականի հունվարի 1-ից համալսարանի աշխատակիցների աշխատավարձը բարձրացնելու վերաբերյալ: Ռեկտորը նշեց, որ արդեն ձևավորվել է ավանդույթ համալսարանի աշխատակիցների աշխատավարձը տարվա սկզբին բարձրացնելու հարցում: Առաջարկվում է 2015թ. հունվարի 1-ից համալսարանի աշխատակիցների աշխատավարձը բարձրացնել

10 տոկոսով: Բացի այդ, եթե տարվա ընթացքում ստեղծվում է հնարավորություն, աշխատողներին տրվում է նաև հավելավճար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Հոգաբարձուների խորհրդի անդամներ Մ.Ղազարյանը և Ս.Սամվելյանը: Նրանք առաջարկեցին հավանություն տալ ներկայացված առաջարկին և ընդունել համապատասխան որոշում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հոգաբարձուների խորհուրդը քվեարկությամբ միաձայն.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Թույլատրել համալսարանի ռեկտոր Ա.Թարվերդյանին համալսարանի աշխատողների աշխատավարձը 2015թ. հունվարի 1-ից բարձրացնել 10 տոկոսով:
2. Թույլատրել համալսարանի ռեկտոր Ա.Թարվերդյանին տարվա ընթացքում, ֆինանսական հնարավորություններից ելնելով, ձևավորված ավանդույթի համաձայն, աշխատակիցներին տալ նաև հավելավճար:

ԼՍԵՑԻՆ՝ *Ընթացիկ հարց 2.*

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտոր Ա.Թարվերդյանի հաղորդումը 2015 թվականի ուսման վարձավճարների չափի սահմանման վերաբերյալ: Ա.Թարվերդյանը նշեց, որ 2015-2016 ու.տարվա 1-ին կուրսերում վարձավճարների էական փոփոխություն չի առաջարկվում, իսկ 2-րդ և բարձր կուրսերում ընդհանրապես փոփոխություն չի կատարվում, ուստի ռեկտորատը առաջարկում է հաստատել վարձավճարների ներկայացված չափերը: Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվելու դեպքում, այն կհրամանագրվի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Հոգաբարձուների խորհրդի անդամներ Ս.Երիցյանը, Վ.Աբրահամյանը և Զ.Մելիքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հոգաբարձուների խորհուրդը քվեարկությամբ միաձայն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել Հայաստանի ազգային ագրարային համալասարանում 2015-2016 ուստարվա վարձավճարների չափերը ըստ մասնագիտությունների և հանձնարարել ՀԱԱՀ ռեկտոր Ա.Թարվերդյանին հրամանագրել այն:

ԼՍԵՑԻՆ՝ *Ընթացիկ հարց 3.*

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտոր Ա.Թարվերդյանի հաղորդումը այն մասին, որ Հոգաբարձուների խորհրդի 2014 թվականի հունվարի 24-ի նիստում /արձանագրություն 1/3 / Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ ստեղծվել է ՀԱԱՀ հիմնադրամի «Ուսումնագիտա-արտադրական և խորհրդատվական կենտրոն» սահմանափակ պատաս-խանատվությամբ ընկերության կարգավիճակով: Այդ նույն որոշմամբ հանձնարարվել էր ռեկտոր Ա.Թարվերդյանին ստեղծել հանձնախումբ նշված ընկերության կանոնադրությունը մշակելու և ներկայացնելու Հոգաբարձուների խորհրդի քննարկմանն ու հաստատմանը:

Նշված ընկերության կանոնադրությունը մշակվել է, փորձաքննության է

ներկայացվել իրավաբաններին, արժանացել է հավանության և ներկայացվում է հոգաբարձուների խորհրդի քննարկմանն ու հաստատմանը /ՀԱԱՀ հիմնադրամի «Ուսումնագիտաարտադրական և խորհրդատվական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրության նախագիծը տրամադրվել է խորհրդի բոլոր անդամներին/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Վ.Աբրահամյանը, Ս.Ղազարյանը, Հ.Հակոբյանը, Ա.Ղարիբյանը և Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ս.Սարգսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ այդպիսի ընկերության ստեղծումը հնարավորություն կստեղծի որոշակի պայմաններով, որոնք սահմանված են կանոնադրությամբ, ներգրավել արտաքին ներդնողների՝ այդ թվում նաև ֆիզիկական անձանց, ինչը հնարավորություն կտա ամրացնելու և զարգացնելու համալսարանի և նրա գիտական կենտրոնների ուսումնագիտաարտադրական բազան և բարելավելու արտադրական ցուցանիշները:

Ընկերության կայացման դեպքում, ոչ միայն կբարելավվի ուսանողների ուսումնաարատդրական պրակտիկաների անցկացման որակը, գիտաարտադրական հետազոտությունների արդյունավետությունը, այլև զգալի ներդրում կկատարվի հանրապետությունում գյուղմթերքների արտադրության, վերամշակման և իրացման ոլորտներում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հոգաբարձուների խորհուրդը քվեարկությամբ միաձայն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել ՀԱԱՀ հիմնադրամի «Ուսումնագիտաարտադրական և խորհրդատվական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրությունը:
2. Հանձնարարել ՀԱԱՀ ռեկտոր Ա.Թարվերդյանին սահմանված կարգով այն ներկայացնել գրանցման:

ՀԱԱՀ Հոգաբարձուների խորհրդի հերթական հիստը եզրափակվեց խորհրդի նախագահ Ս.Սարգսյանի ելույթով: Իր խոսքում նախագահը նշեց, որ Հայաստանի ազգային ագրարային համալսարանը բոլոր ոլորտներում ունի զարգացում և առաջընթաց, ինչի կապակցությամբ Հոգաբարձուների խորհրդի անունից շնորհակալություն հայտնեց գործադիր մարմնին և ցանկացավ, որ ընթացիկ տարում և հետագայում ևս զարգացման միտումները պահպանվեն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ջ.ԳԵՎՈՐԳՅԱՆ